



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ 28 ՅՈՒՆԻՍ 1873

ԹԻԻ 967

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պարսից Շահն կըշարունակէ իւր ճանապարհորդութիւնն Եւրոպայի մէջ։ Նորին վեհափառութիւնն փարիզէն 'ի Զուրիցցէր անցաւ, ուր իստաւոր ընդունելութիւն գտնելէ ետեւ առեւտրական դաշնագրութիւն մի ևս հաստատեցաւ Պարսից կառավարութեան և Զուրիցցէրի հասարակապետութեան մէջ։ Օգոստոսի առ Նաւր—իտ Տիւն—Շահն 'ի տալիս թագաւորին հետ տեսնուեցաւ 'ի Դուբլին և անկէջ 'ի վէննա գնաց ուր 'ի կայսրանն երկաթուղւոյն ընդունուեցաւ 'ի կայսերէն Աւստրոհունգարիոյ, որուն քով կըգտնուէին արշիւքներն և նախարարներն։ Նորին վեհափառութիւնն դաւ շարժու կըսպասուի 'ի Կ. Պօլիս և Մեծագոր Սուլթանին հրամանաւ Սուլթանիէ և Թալիս կոչուած կայսերական գեղեցիկ շոգենաւերն 'ի Պրինտիսի յուղարկեցաւ զՊարսից վեհապետն բերելու համար։ Այլև Բ. Դուռն հեռագրով հրաման տրուաւ Հոռմի օսմանեան դեսպան վսեմա Սարգիս Բէկնախին 'ի յիշեալ քաղաքն երթալ և անտի ուղեկից լինել օգոս. Շահն մինչև 'ի Կ. Պօլիս։

Ռուսիոյ և Աւստրոհունգարիոյ կառավարութեանց մէջ բարեկամական կապակցութիւններն երթալով կըսեղմուին և քաղաքային համաձայնութիւնն ևս քան զէս կըհաստատուի։ Այս բարեկամական կապակցութեան աստուծոյ կըհամարուի օգոստոս։ Չարին այցելութիւնն 'ի վէննա. այցելութիւնն ուր շուտով պիտի հաւուցուի։ Գանդի վէննայէն հասած վերջին լուրերն կըմանուանեն թէ Պրանչիսկոս—Յովսէփ վեհա. կայսրն 'ի քննադիր յատուկ նամակաւ մի իմացուցած է օգոստոսի առ Ալեքսանդր կայսեր թէ 'ի վերջին աւուրս առաջիկայ Սեպտեմբերի 'ի Բեզդերսպորկ պիտի գտնուի։

Հոլանտիոյ տէրութիւնն երկրորդ արշաւանք մի կընէ Աթլին տէրութե գէմ 'ի Սուամթրա

կղզին. զոր պաշարեալ է այժմ Յայսնի է թէ առաջին արշաւանքն չյաջողեցաւ. ուստի այս անգամ մեծադոյն զօրութեամբ և ամեն հարկաւոր նախապատրաստութեամբ կըյարձակի, և կըյուսայ թէ նշանաւոր յաղթութեամբ պիտի պսակուի իւր արշաւանքը։ Այս նշանաւոր յաղթութիւնն ամենահարկաւոր է Հոլանտացւոց համար, որպէսզի կարող լինին հաստատուն պահել Հնդկաստանի մէջ իրենց զօրութեան համարումը. քանզի Հոլանտիոյ տէրութիւնն մինչև ցայսօր կարող եղև տիրապետել գրեթէ 20 միլիոն տեղացի ժողովրդոց 'ի Սուամթրա, 'ի ճավա և Պորնէյի մէկ մասին մէջ 25,000 զօրք. յորոց 10,000ն միայն Հոլանտացի են, իսկ եթէ ներկայ պատերազմին մէջ մեծ յաջողութիւն մի ձեռք չբերուի, հետեւանք անշուշտ աղէտալի պիտի լինին վասն Հոլանտացւոց ապագային մէջ։ Այսու ամենայնիւ տարակոյս չկայ թէ Հոլանտական տէրութիւնն շուտ կ'ամանագան յաղթող պիտի հանդիսանայ Հնդկաստանի մէջ. մանաւանդ որ մեծ տէրութիւնք ևս համակրական զգացմունք կըցուցնեն նմա այս պատերազմին մէջ։

Քիվայի խանին պարտութեամբն, Ռուսիոյ մեծադոյն կայսերութեան ազդեցութիւնն կատարեալ եղև Կիւրմիսկան Ասիոյ մէջ։ Աղբեցութիւն բարեբար. որով քաղաքակրթութիւնն սակաւ առ սակաւ պիտի յառաջադիմէ յիշեալ գրեթէ բարբարոս ընդարձակ երկրին մէջ։ Արդէն Քիվայի խանութեան մէջ գերեվ վաճառութիւնն ջնջուեցաւ Ռուսիոյ կայսերական մարդասէր կառավարութեան ջնորհիւն և հազարաւոր գերեւներ, որք 'ի բազում ամաց հետէ կը տառապէին 'ի ծառայութեան Քիվայի խանին, իրենց ազատութիւնն ստանալով և զօրապետ Բոֆմանին խնամքն 'ի հայրենի իւրեանց յուզարկուելով, արտասուելից աչք կ'օրհնեն զանուն օգոստոսի առ կայսեր ամենայն Ռուսաց, Ալեքսանդրի երկրորդի, և Նորա անգին կե-

նայն կրկարութիւն կըբարեմաղթեն, կըհաւաստեն թէ 'ի յիշեալ գերեաց գրեթէ տասն հազարն Պարսիկ են։

Քիվայի խանին հետ դաշնագրեալ խաղաղութեան պայմաններն ըստ Կ. Պօլիս լրագրոյն, հետեւեալքն են։ Յիշեալ տէրութիւնն 'ի բոլոր տուգանք պատերազմի, երկու միլիոն արծաթ ռուպլի պիտի վճարէ Ռուսիոյ կառավարութեան 'ի միջոցի եօթն ամաց։ Մինչև ցվճարումն այս գումարին, Շուքատալ և Քիւնկրատ կոչեցեալ քաղաքներն Ռուսիոյ զօրաց ձեռքը պիտի մնան իբրև երաշխաւորութիւն։ Ներկայ խանին իշխանութեան օրովն Քիվայի տէրութիւնն անկախ պիտի մնայ. որոյ սահմանադրութիւն յայտն հետէ պիտի լինի Ամու—Տարիա գետն։ Իսկ այս գետոյն ալ եղբւրք գտնուած Քիվայի երկիրներն Պոլսարայի պիտի տրուին 'ի վարձատրութիւն ծառայութեանց զորս Պոլսարայի Էմիրն մատուցի Ռուսիոյ այս պատերազմին մէջ։

Անգղիոյ լրագիրք շեմբուանդութեամբ կըշնորհաւորեն օգոստոս. վիթթորիա թագուհոյն և թագաւորական գերդաստանին զբարեջաշող հարսնախօսութիւնն Էտիմպուրկի գէթին այսինքն թագուհոյն երկրորդ որդւոյն ընդ բարձրա. Մարիա Մեծ—Դքսուհոյն՝ միակ դստեր օգոստոս։ Չարին 'ի թրթմուտի նաւահանգստին մէջ անգղիական նաւատորմին փառաւորապէս կատարեց զտօնախմբութիւնն այս հարսնախօսութեան։ Ամեն նաւերն զարդարեալէին Անգղիոյ և Ռուսիոյ դրօշակօք, որք 'ի ծայրս կայմից բարձրացեալ կըծածանէին։ Չերմեւանդ բարեմաղթութիւնք եղան վասն երջանկութեան օգոս. ամուսնոյ 'ի ծայն թնդանօդաց՝ որք արձակեցան 'ի պատիւ տօնախմբութեան։

Օրթօտօքս կրօնի համար փառաւոր տաճար մի կըկառուցուի 'ի Վոլինտօր, վասն կայսերապետ Մեծ—Դքսուհոյն. իսկ այս ամուսնութեանն ծնեալ զաւակներն բողոքականութեան այսինքն իրենց հօրը կրօնին պիտի հետեւին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Ի ԼԵԱՌՆ ՇԱՀԱՊԻՎԱՆ

- Անդ, ուր գաւառն է ծաղկածին յԱրարտեան աշխարհի,
- Աւր հովասուն շնջէ դեփիւռ, ուր և գարունն հեշտալի։
- Աւր մեղ արիւնի գեղազուարճ, ուր և լուսին շողջողին,
- Լայնածաւալ անդ դաշտորայք տոտր հասկօք ծածանին։
- Կարկաշտաճ աղբերց վասկ բաղան չըլին ընդ մայրիս,
- Ընդ բլուր առուակս ոռոգանեն կանաչազել դաշտիս։
- Աստէն ահա լեռն բազմի բարձրադիտակն Շահալիւս։
- Ահ, ուր երբեմն մեր արքայից, մեր դիւցազանց էր կայեան։
- Ի սմա էրէք զարմանազանք կնդալաբաշք կայտէին,
- Եւ երգներանգ թռչնոց երամբ հոլաթեալ ճարտէին։
- Աւաղ զարդիս զուրկ 'ի փառաց տիրեալ դիմօք երևի,
- Որով աղիք անցաւորաց յոյժ կարկէր խոցոտի։
- Խոսեաց աղէ, լեռնոյ իմ քաղցրիկ, ընդէ՞ր հեծես ցաւազին,
- Պող համակեալ 'ի յարտասու տրտում տխուր գլխովին։
- Ո՛ւր արք 'ի քո մայրեաց 'ի ծոց երէ վայրիք բազմազանք,
- Ո՛ւր և ծառոցն անդ 'ի բարձունս կայտուին թռչնոց քաղցրածայն։
- Անդ դաշտայիկ, անդ ճուղիւն նոցին հնչէր քաղցրութեան,
- Որով բնութիւնն 'ի յերգ 'ի սալ հաստէն լինէր գոհաբան։
- Աստ 'ի ծագել վարդակարմիր ոսկեծղի արեգին,
- Որ համբուրէր ճառագայթիւք զքոյդ գազաթ ծաղկածին։
- Ո՛րպէս սոխակն այն երգեցիկ բլուր նուագօք ընդ զօդ,
- Թուէր, խաղայր և ուտոտէր վարդից վերայ խնկահոտ։
- Ահ էր երբեմն 'ի քո կատարք արքայազունք խաղային,
- Եւ յամբարն սրպէս զարծուի եկեալ 'ի յորս չըլէին։

- Տարաի նետից, շուռաչ գինուց աստէն նոցին լսելի,
- Քերէր զծաղկամբ, քերէր զխոտովք գնացք նոցին նազելի։
- Ապա, ո՛վ լեռնոյ իմ սիրային, զի՞նչ այդ կակիծ դառնութիւն,
- Ո՛ր քո ժպիտ գեղածիծաղ և ո՛ւր դիմացդ ցնծութիւն։
- Աստ խնդրեմ, ո՛ւր քո շքեղ վայելչական զարդ փառաց,
- Աստ, ո՛ր ձեռք բարբարոսին 'ի քէն զայդ շուք կողպտեաց։
- Լռեաց բնութիւնն, թնդաց մեծ լեռն և վայրն ողջոյն շարժեցաւ,
- Ձայն հեծութեան հառաչանայ յիմ լսելիս հնչեցաւ։
- «Պո՛ւ պատանի հեռաքնին վառեալ 'ի սէր հայրենեաց,
- Ձի՛նչ աստ խնդրեմ, ձայն արձակես լինել ցաւոցս իրազգած։
- Չնախկին իմ վէպ մի արդ յուզեր, որք զարթուցիչ են վշտաց,
- Համբաւ բարեաց եթէ ունիս հնչեալ իմոց լսելեաց։
- Աւեսարե՞ր թէ գուժաբեր դաս ինձ յերկրէ Հայկազանց,
- Բարձա՛ւ նախանձ, բարձա՛ւ մտխա՛նք, սիրոյ նշոյլ արդ ծագեա՛ց։
- Եթէ գուժեւ աղէտ ինձ ցաւ, արդէն եմ ես վշտահար,
- Ձի՛ մեկնեցան իմ հարազատք օտարք աւետեն յիս դաղար։
- Ո՛ւր իմ շքեղ արքայազունք, ո՛ւր օրիորդք գեղապանձք,
- Ո՛ւր պատանիք իմ հրաշալիք, ուր նահատակք հայրենեաց։
- Աւաղ եղեն զո՞հ նախանձութիւն լքին զիս այրի,
- Ահաւսիկ կամ ես 'ի սուգ 'ի սէր նոցին անձկալի։
- Ձե՛ն ինձ պիտոյ գերամարմին խումբ ծաղկասուն էրէոց,
- Մի՛ հնչեացէ այսուհետեւ քաղցրանուագ ձայն թռչնոց։
- Մի՛ փթթեցին ծաղկունք բուրեանք, մի՛ շնչեցէ յիս դեփիւռ,
- Եւ առուակայ դաղարեցէ կարկալ խոխոլ քաղցրալուր։
- Միայն նոճիք սգատերեք հանցեն չըլին ողբալից,
- Ողբալ զիմ ցաւ, ողբալ զաղէտ, լինել վշտացս վշտակից»։

Ի Շուշի, 21 Ապրիլ 1873։

Աւակերտ չորրորդ գոտարանին

Ազգային հազար գաղութին Հայոց Ղարաբաղու

Աղամալ Աղամալեանց։

Անդրիայ հասարակաց խորհրդանունն էստիմուր-
կի գ. քսին մատուր ամուսնութեան առթիւ,
տասնհազար լիւա յուելուած մի որոշեց՝ նորին
Բարձրութեան տարեկան թուական վերայ :
Խնամական այս ազգակցութիւնն՝ տարակոյս
չկայ թէ մեծապէս նպաստամատուց, պիտի լինի
ևս քան զիս հաստատութեան և զարգացման
բարեկամական յարաբերութեանց, որք կը-
տեսնուին Ռուսիոյ և Անգլիոյ մեծազոր տէրու-
թեանց մէջ : Եւ յարաբերութիւնք՝ որք նոր և-
րաշխաւորութիւն մի կը համարուին Եւրոպիոյ
խաղաղութեան անվտանգ անվտանգ :

Եւրոպիոյ մէջ հիմնադրուել խորայնէրան դաշ-
նակցութիւն Alliance Israelite անուանեալ ըն-
կերութեան նախագահ սիր Մոզէս Մոնթեֆիոր-
ը հրեայ մեծահարուստ սեղանաւորն աղերաս-
գիր մի մատուցեալ լինելով Շահին, վսեմա-
մեծութեան Նորին վեհափառութեան հրա-
մանաւն հետեւելով պատասխանն գրած է նմա :

Ըստ հրամանի օգոստոս . Շահին կը ծանուցա-
նեմ ձեզ զընդունելութիւնն յիշատակադրոյն
ձերոյ, որով ընդհանրապէս պաշտպանութիւն
և բարեբարութիւն կրինդրէք վսեմ հրէից
Պարսկաստանի : Նորին վեհափառութեան միշտ
մարդասիրական խնամք ունեցաւ վսեմ բարե-
կեցութեան հպատակաց իւրոց՝ առանց խորու-
թեան աստիճանի և կրօնի : հետեւաբար պիտի
հսկէ, որպէսզի անխառնութիւնք և ապօրինաւոր
խտուութիւնք ի գործ չդրուին ընդդէմ հրեայ
ժողովրդեան : զոր իրաւամբ կանուանէք հա-
ւատարմ, խաղաղասէր և ճարտարամիտ Նորին
վեհափառութիւնն իւր շնորհակալութիւնն կը-
մատուցանէ ձեզ վսեմ բարեմաղթութեանց զոր
կընէք իւր անձին համար :

(Պարսկերէն :) ՄԵԼԻՍԻՍ ԽԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պոլսոյ ազգային վարչութիւնն՝ ամենապա-
տիւ խորմեան Ս. Պատրիարքին ստորագրու-
թեամբն և Յունիսի 7 ամաթուով հետեւեալ
ընդհանրական յազարկած է գաւառական
ազգային վարչութեանց : Այս ընդհանրականին
վերայ մեր ընթերցողաց ծանր ուշադրութիւնն
կը հրաւիրեմք :

Ասկէ յառաջ հինգ չընդհանրական գրութիւններ զը-
կուած են առ ամենայն Սահմանադրական վիճակս, 1872
Յուլիս 22. Օգոստոս 21. Հոկտեմբեր 3. Նոյեմբեր 17.
և 1873. Փետրուար 6 թուականներով :

Սոյն չընդհանրականներով զվարդաբար խնդրուած
էին

Ռիւստ դասեր Շապուր, որոնց քաջին Սմբատայարքային Բագ-
րատունոյն ի հրաժեշտի իւրում, յորժամ հանգեցնէր մեկնիլ ի
հայրենեաց ի կնոքին ոստիկանին հազարացոց Ալիշին :

Տիւրք է ժամ օրիորդին, բայց զու մի ըսր ո՞վ հայրիկ :

Վասն իմ օր է յոյժ ցաւազին, բայց մի՛ սգար ո՞վ մայրիկ :

Ես զո՞հ եղցի իմոյ ազգին և իմում տանն հայրենի :

Միայն կիցցեն իմ հայկազունք, իմ Հայաստան փրկեցի :

Թո՛ղ գնացայ ի տար աշխարհ և զո՞հ եղցի հայրենեացս :

Թո՛ղ գրկեցայ ի սէր ազգին ի սիրտուն ծնողացս :

Մինչև ցայսօր Հայ պատանիք են հայրենեաց նահատակ :

Ասժմ օրիորդք թող խաղաղցեն գոռ թշնամացն ի ճակատ :

Միթէ վայել օրիորդիկ, իրախ լինիլ աստ ի տան :

Մինչ տեսնեմ, ո՞հ, պաշտօնաւ իմ անձկալի Հայաստան :

Սչխարհ ամէն առեւ ի գոլ զերբայեցին զՅուզիթ :

Արդ գովեսցեն ի մի բերան զհայկազուն ըզդարձիկ :

Հողէրհոնէս անագորոյն հազարային այն Սիւնի :

Սպանայ կորուստ իմ հայրենեացս հիմնոյատակ զլիւծին :

Ռերեմն երթայց յազատութիւն իմ հայրենեացս սիրելի :

Հազարացոյն թէպէտ ես կին, եղցի անհաշտ թշնամի :

Ահ Հայաստան, ո՞չ մոռացայ ըզբեղ բնաւ յաւիտեան :

Սրբանուէր իմ կրօնին, հեռ կացից և պատկառ :

Մնա՛ղք բարեաւ, ո՞վ աղգականք, ահա ի ձեռն հեռանամ :

Սյուսհեալ զձեզ չտեսից նակայն ըզձեզ չմոռանամ :

Մնա՛ղք բարեաւ, անտառք, լերինք զաշտ ծաղկածինք հայրենի :

Ռիւստեմ պահէ ևս անմոռաց զձեռ յիշատակ իւրսի :

Ի Շուշի, 15 Ապրիլ 1873 :

Սիմեոն Հախումեանց :

Ա. Սահմանադրութեան գործադրութիւնը .

Բ. Վիճակադրական տեղեկութիւն .

Գ. Պատահած հարստահարութեանց պիճանագրու-
թեան պատճէնը :

Ա. Սահմանադրութիւնը գործադրելու մասին գաւա-
ռական վարչութեանց և Բաղական խորհրդոց համար
առանձին Սահմանադրական հրահանգներ տարածուե-
լով, նոյն չընդհանրականաց հետ զրկուած են առ ամե-
նայն առաջնորդական վիճակս :

Յաւաբ արտի կը ծանուցանեմ որ առաջնորդական վի-
ճակներէն ոմանք տակաւին անխորթ կեցած են Սահմա-
նադրութեան գործադրութեանը մասին և կի՛ն այսու-
հետեւ ալ մի և նոյն անխորթ ընթացքը չարդարեմն
կեղծողական վարչութիւնը պիտի պարտաւորի նոյն
գաւառին ազգային պաշտօնէից դէմ խաղաղութեամբ վա-
րուիլ, և իւր կողմէն պարտաւորաւորապէս տնօրինել իւր-
ձադրութիւն Սահմանադրութիւնն : (1)

Իսկ անոնք որ գործադրած են Սահմանադրութիւնը,
և գաւառական ընդհանուր ժողովը և կրօնական ու քա-
ղաքական ժողովները կազմուած և կեղծողական վա-
րութեան վաւերացնել տուած : պարտական են իրենց
սահմանադրական ընթացքին և վիճակին վրայ տեղեկա-
գիր տալ ի հասանել ներկայ չընդհանրականին, և ծա-
նուցանել թէ :

1. Կրօնական և քաղաքական ժողովները չարաթիւ
միանգամ ստիճական նիստերին կը շարունակեն, օրի-
նաւոր արձանագրութիւն ունին, և ընդհանրապէս
լինչ խնդիրներով կը զբաղին :

2. Ուսումնական և Տնտեսական խորհուրդներն ի-
րենց շարաթական նիստերը կը շարունակեն, և ինչ
գործերով կ'զբաղին : (2)

Ուսումնական խորհուրդը սկսած է (3) գաւառից քա-
ղաքաց և զիւրոյն վարժարանաց վրայ հսկել, անոնց
հոգաբարձութեանց հետ ըստ օրինի յարաբերութիւն
ունենալ, և միւս կողմէն յարաբերութիւն ունենալ կեղ-
ծողական վարչութեան Ուսումնական խորհրդոյ հետ :

Նոյնպէս Տնտեսական խորհուրդը 1873 Փետրուար
6 չընդհանրականին համեմատ գաւառից ազգային հա-
տատութեանց կալուածադրուին օրինակը պատրաս-
տել տալ սկսած է, որպէսզի ժամ յառաջ փութայ

(4) Սէր կարծեմք քէ ազգային կեղծողական վար-
չութիւնն պարտի փութալ խտուրեամբ վարուիլ գա-
ւառական ազգային պաշտօնէից դէմ (քէ երկու կար-
դութիւնն ունի), եւ իւր կողմէն պարտաւորաւորապէս
տնօրինել ի գործադրութիւն Սահմանադրութեան .
սր խիստ բերի կերպիւն գործ կը յայտնի գաւառաց-
մեջ, առանց ի բաց առնելոյ զբաղաբ մեր եւ զկուս-
տանցեալայոյ իսկ :

(2) Իմքին մեջ Տնտեսական խորհուրդի ցկայ : Նո-
րա պաշտօնն քաղաքական ժողովոյ յանձնուած է :

(3) Զմիւռնիոյ Ուսումնական խորհուրդն՝ այդ
գրուցուածներէն եւ ոչ մեկը ի գործ դրած է :

զրիկէ տա կեդ. վարչութեան Տնտես. խորհուրդն (4) :

3. Գաւառից Բաղական ժողովը իւրաքանչիւր
թուրի կամ զիւր մէջ սահմանադրական Բաղական
խորհուրդները ընտրել տուած է, և նոյն Բաղական
խորհուրդները վաւերացնելով, հրաւիրած է զանոնք
թաղական խորհրդոց հրահանգին համաձայն իրենց
թաղին կամ զիւր կին եկեղեցոյ, վարժարանի և այլ
հաստատութեանց պայծառութեանը փոյթ ունենալով,
Եկեղեցեաց և վարժարանաց հասցիները լաւ կերպով
տնտեսելու և կալուածները արդիւնաւորելու, յատուկ
Հոգաբարձութիւններ կազմելու, և նախնական անհրա-
ժեշտ ուսմանը՝ որ թաղական խորհրդոց հրահանգին
մէջ նշանակուած են, հաւասարապէս աւանդելու թի-
մանչ և թէ՛ աղջիկ աղայոց :

4. Գաւառական ընդհանուր ժողովը մինչ յարդ քա-
նի՝ անգամ նիստ ըրած է, և թէ՛ Երկուրեկան համա-
րառութեան համար երբ նիստ ընելու պիտի հրաւիրուի
վսեմի կրօնական և քաղաքական ժողովներն ընտ-
րուելէն երկու տարի յետոյ համարաւորութիւն պիտի
ընեն գաւառական ընդհանուր ժողովին, որ գործնա-
մուտին կամ յարմար եղած ժամանակին պիտի բացուի
ըստ գաւառաց սահմանադրական հրահանգին (տե՛ս է-
րես 13 յօդուած 3) :

Կրօնական և Բաղական ժողովոյ ընտրութեանն
վաւերացման թուականը պէտք է յարմարեցնել գաւա-
ռական ընդհանուր ժողով բանալու ձիւ ընտրած յար-
մար թուականին . հետեւաբար Կրօնական և քաղաքա-
կան ժողովոյ պաշտօնավարութիւնը քանի մ'ամիս պի-
կան կամ աւելի պատահի փոյթ չէ : Արդ պէտք է որ
գաւառական ընդհանուր ժողովը համարաւորութեան հա-
մար բանալու օրը կանխաւ որոշէք, և ծանուցանէք միւր

5. Գաւառական ընդհանուր ժողովը 173 մասը երկու
տարին անգամ մը պիտի նորոգուի ըստ Սահմանադրու-
թեան (տե՛ս գաւառաց հրահանգի երես 13 յօդուած 2) :
նոյնպէս զիւր նորոգութիւնը պիտի կատարուի ամեն
տարեգլխի . ինչպէս նաեւ բոլոր ժողովոյ և խորհրդոյ
զիւրանները պիտի նորոգուին, և վերընտրելի են : Արդ
գաւառից ընդհանուր ժողովը ընտրութեան և վաւե-
րացման թուականին համեմատ այս երկու տարեկան մաս
նակի նորոգութիւնը պէտք է որ կատարէք : Եթէ երկու
տարին լրացած է, առաջին անգամին ընդհանուր վի-
ճակ ձեռնարկ ըստ օրինակի կեղծողական երեսիտեան
կան ընդհանուր ժողովոյ :

Սոյն մասնակի նորոգութիւնն ալ պէտք է որ համա-
րառութեան համար որոշեալ երկու տարեկան նախ լրայ-
ման թուականին պատահի :

6. Վերջապէս, ինչպէս որ Սահմանադրական հրա-

(4) Սյս պահանջումն անգործադրելի կերպիւն մեզ
եւ կարծեմք քէ երկու իսկ ի կ. Պոլսոյ չգործադրե-
ցաւ . այսինքն քաղեքն՝ իրենց ազգային հաստատու-
թեանց կալուածագրքն քուզեցին յանձնել կեղծողա-
կան վարչութեան Տնտեսական խորհուրդին :

ԱՆՏԱՌՆ ՍՈՍԵԱՅ ԱՐՄԵՆԱԿԱՅ

Ի զատակերտն Սրմայիւսեան յԱրարատեան աշխարհի,
Հնչէր երբեմն շրին Սոսեայ Սրմնակայ անտառին :
Անդ քաղցրասիւղ հնչէր զեփիւս, նահապետին սիրտ ցնծայր :
Եւ ցանկալին իմ Հայաստան տուն կատարէր գեղապար :
Անդէն սոխակն, անդ ծիծեռունք գեղգեղէին քաղցրաձայն :
Ա. ետէին իմ հայրենեաց նոր առաւօտ ի գարնան :
Արազընթաց անդ եղջերուն, անդէն այծեամն ոստոտէր :
Վազ առնուին ցիւս և վարազ, առեւծն ահալ մոնչէր :
Անդ քրքրազոյն լոյս արեգին ծագէր հանդէպ անտառին,
Գիւղերովան յերկնից բարձանց փայլ արծակի մեր լուսին
Ծաղկունք բուրեանք զարմանալանք արեգընդդէմ փողփողին :
Արծաթափայլ անդ առուական խոխոջ քաղցրիկ լսէին :
Անդ շինարարն իմ Սրմնակի ի գործ ձեռացն վայելէր,
Սոսանուէրն Անուշաւան սօս գնացիւք անդ ձեռքի :
Այս է ահա տիկ հանդիսս յորում սօսիք բանականք :
Հայկաստանէ պերճ զուտկունք ի մի խմբալ միաբանք :
Սիրոյ ծաղկունք արդ փողփողին ի դէմն նոցա արդ խայտան,
Եւ իւր առուակը օրհնեղութեանց առաւանջս տան հորդան :
Երգէ մանկտին և նուազէ ըզյարուութիւն Միւսնին,
Որ կենարար իւր յարութեամբ յարցոյ գիւտան մարդկային :
Ռ. ր սէր իցէ և միութիւն և սիրտ կցորդ համարուն,
Անդ սուրբ հոգին աղղէ ի մեջ զԱստուածային զիւր շրջին :

Ի Շուշի, 8 Ապրիլ 1873 :

Աշակերտ շորորդ գաւառանին
Ազգային հոգեւոր զարոյցն Հայոց Ղարաբաշու
Սիմեոն Հախումեանց :

հանգայ սկիզբը հրատարակեալ աղբյուրն մէջ ծանուցում է, նոյն հրահանգները փորձառութեամբ վերաքննելու պէտքը, եթէ գիտաւորութիւններ ունիք, նոյն հրահանգաց վրայ գործադրութեան փորձառութեամբ քարեհանք ծանուցանել մեզ:

Բ. Խնդրուած վիճակադրական տեղեկագրերը տակաւին ամբողջացած չեն. մինչև ցարդ չգրկող առաջնորդական վիճակները կը հրաւիրուին այլ ևս զանապառու թիւն չընել: Իսկ զրկողներուն կը ծանուցուի, որ տպաւ ցուցակներէն դուրս ետքէն որոշուած հետեւեալ տեղեկութիւններն ալ բարեհաճին հաղորդել մեզ:

1. Քանի՞ տուն Հայ կայ իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի մէջ. և որչափ արու և սրչափ էջ, թէ մեծ և թէ փոքր:

2. Առաջնորդական քաղաքը կեդրոն համարելով գիւղորէից անկէ և մէկմէկէ հեռաւորութիւնն որչափ է և քանի՞ ժամ, դէպ ի հիւսիս կամ հարաւ են և եթէ կարելի է աշխարհագրական քարտէսի վրայ մը յիշող այս տեղեկութիւնը: և եթէ ոչ՝ ցուցակով տալ:

3. Քանի՞ քաղաք կամ գիւղ ունիք: որոնց քաղաքական կառավարութիւնը ձեր առաջնորդական քաղաքին կառավարութեանը չի կրնար ընդհանրացնել անոնց անուններն ինչ են և որ առաջնորդի վիճակին քաղաքական կառավարութեանը ներքե կը զբաղուին:

4. Վիճակիդ մէջ որ քաղաք կամ գիւղ պահուի խոռոչներու երկրի մէջ. թիւն փոքր է և օտար երկրի մէջ ինչու՞ կը զբաղուին: և ընդհանրապէս որչափ տարի դուրս կը մնան:

5. Վիճակիդ մէջ բնաւ Հայ չունենցող քանի՞ գիւղ կան, անուններով չընանկէք. և անոնց բնակիչներն ինչ աղբ են, և նիւթական և քարայրական վիճակին ինչ է:

6. Ընդհանրապէս ձեր վիճակին Հայ ժողովուրդը իրենց զբաղել քանի՞ տարիկան կամ տասնամեակն թէ մահէ և թէ ազնիւ, համեմատաբար միջին հասակով: 25 տարեկանէն վեր որչափ ամուրի արու և էջ կը անուրին (5) միծաւ որ թուով մը յայտնել, և թէ տարին որչափ կը ձնէ և որչափ կը վախճանին: Թէ՛ ձնեղը և թէ՛ վախճանեղը օրինաւոր տուամար կը ընտելն. եթէ չկայ հաստատելու հոգ տանիք:

Այս տեղեկութիւնները կարելի եղածին չափ շուտ հաղորդելիք. և եթէ բնաւ տեղեկագիր չգրած չէք, ասկէ առջի ցուցակին վրայ այս նոր տեղեկութիւններն ալ նշանակելով զրկելիք յատկապէս կը ընդգրկուի:

Գ. 1871 տարւոյ Նոյեմբեր 18 թուականաւ 1291 համարաւ դրեալ շրջաբերականին համեմատ, վիճակիդ մէջ պատահած հարստահարութիւնք և անոնց դարմանը խնդրելու համար ի կիր տունուած միջոցներ եթէ կան, յատուկ տուամարի մէջ արձանագրած պիտի ըլլաք. նոյն տուամարին մէկ վաւերացեալ պատճէնը բարեհաճիք զրկել առ կեդրոնական Վարչութիւնն:

Ահա ասկէ առջի շրջաբերականաց գլխաւոր պարտականութեանց վրայ այս անգամ ալ խօսելով, և կարեւոր տեղեկութիւններ ստատելով ձեզմէ, կը յաւելումք ուրիշ կարեւոր խնդրոյ մը վրայ ալ ձեր ուշադրութիւնը հրաւիրել, ըստ որոշման կեդրոնական Վարչութեան:

Բարեխնամ կառավարութիւնը հոգի և այլ անշարժ ստացուածքի վրայ օրէնքներ դրած է, և իւրաքանչիւր որ պարտական է իւր հողը և այլ ստացուածքն իր վրայ թափու ընել տալ ըստ օրինի: Մեր դատաւարի աղգալ յիններէն կան որ թափույի համար վճարուելիք տուրքէն խուսափելով զանապառու թիւն կը ընեն այս մասին, և կամ իրենց հողը բուն քանակութեամբ թափու ընել չեն տար: Պէտք է որ պատուիրէք ժողովրդեան որ վտելայ ըստ օրինի թափու ընել տալ, և իր հողին և ստացուածքին տէր ըլլալ, առանց որոյ տէր չէ, և դատի կամ վճիռ առթիւ իրենց դարաւոր իրաւունքէն կը զրկուին: Կը խնդրուի որ մեծ ուշադրութիւն և հոգ տանիք այս մասին, և յորդորէք ժողովուրդը որ թափու ընել տալու անհոգ չդառնան: Հոգ տանելու էք որ ոչ միայն այս կերպով իւրաքանչիւր որ իր ստացուածքին տիրանայ, այլ իր ստացուածքը զանազան պատճառներով ձեռքէ

չհանէ. դիւայ է հոգաւոր երկրագործ մը թէ և յետին աղքատ ըլլայ, և այլ է առանց հոգի երկրագործ մը, որ ծառայ կամ ստրուկ է: Այս ստանձառու կրկին կը յորդորենք զձեզ, որ ամենայն փոյթ տանիք ձեր վիճակին ժողովրդաց քարտէսը, և ի ձեռն եկեղեցական և աշխարհական ձեռնհաս անձանց ծանուցանել տալ, որ իւրաքանչիւր որ թափու ընել տալով իւր հողին և ամենայն ստացուածքի տէր ըլլայ: Այս մասին ձեզմէ կատարեալ փութալանութիւն և պաշտօնականութիւն կը պահանջուի, և որ և է զանապառու թիւն աններելի է:

Յետով եմք որ Ձեր տոյլիք ուրիշ տեղեկութեանց հետ թափուի խնդրոյն վրայ ալ լլուրի և դիտարկելի տեղեկութիւն կուտար, և հետզհետէ հոգաւոր ըլլալով, միշտ միջէ ալ մեզ կը ծանուցանէք:

Խնդրելով Աստուծակէ որ աջակից զմեռի մեր ամենուս ջանից և աշխատանայ, և ինքն արդիւնաւորեցէ, 7 Յունիս 1873 Մեծաքաղաք:

Յ. Գ. Ընդ գրուց պիտի ստանաք «Հրահանգ Յարաբերութեան Առաջնորդաց և դատական Վարչութեանց ընդ տեղական կառավարութեան» անունով տպեալ տետր մը, որոյ մէջ մանրամասն դրուած է թէ առաջնորդք և դատական Վարչութիւնք տեղական կառավարութեան հետ յարաբերութիւնն ինչ կերպով կատարելու են, հոգ տանիք զայն ընթեմելու և ի մաստին ուշադրութիւն ընել միշտ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅ ՎԱՐՇԱՆՈՅՍ

ԱՍԻԱ օրով երթին Յուլիսի 11 թուոյն մէջ յիշեալ վերնագրով երկար յօդուած մի հրատարակեալ կրտսնեմք, յորմէ հետեւեալ մասն քաղելով արժան կը համարուի մեր ընթերցողաց աչաց առջև դնել առանց յաւելցնելու զտխուր խորհրդածութիւնս մեր. քանզի թէ պէտեւ եկեղեցականաց բարեկարգութիւնն հարկաւոր է, բայց ևս առաւել հարկաւոր կը համարուի զբարեկարգութիւնն աշխարհականաց, որոց ծնունդք են եկեղեցականք: Չմոռանալով ասելու թէ աղղային լրագրաց բարեկարգութիւնն ևս ամենահարկաւոր և անհրաժեշտ է:

Ահաւասիկ վերոյիշեալ յօդուածն.

«Իսկ ինչ է որդի եկեղեցականաց վիճակը:

«Վնասաւթեամբ խօսելով կըսեմք որ հասարակաց գրաստանները, տունները և երբեմն իսկ թատրոնները զիրամատչիլ եղած են մեր սպասարարական եկեղեցականաց: Ումանք Վասիլի Կրտսեան արտերը, այլք Ասիական եղբրը նստած, ոմանք Բերայի մէջ, այլք Պոլսոյ տրուարձանները անխուղ և անդորր կեանք կը վարեն, օտար ժողովուրդեան, օտար նորա հարստահարութեանց և տատապանաց, Ժողովուրդը իր կրօնական միջնորդութիւնը զսէ ընելու համար եկեղեցին կը գիւնէ, քահանայից գիրկը կը վազէ, միջնորդ եկեղեցաց իշխանութիւնն վարող և ժողովրդեան ցաւոյ դեղ և դարման խորհիւր պարտաւորեալ պաշտօնեացք՝ եկեղեցիէն կ'օտարանան և հազիւ երկու երեք շաբաթը անգամ մը եկեղեցի կ'ընեն ժողովրդեան հոգեւոր միջնորդութիւն չնորհելու համար, որով և ժողովուրդը կը մնայ առանց ուսուցչի, առանց վարդապետի. հետեւ բար կըմարի իր կրօնական գագայմանց խանգը, և կրօնն իր ազնուութեամբ ու գեղեցկութեամբ հանդերձ տարացեալ և խորթացեալ կոկոն երկու իր զաւակացւայն կրօնը՝ որ աշխարհի դարաւոր բռնութիւններէն դերձ մնալով հասեր է մինչև ներկայ դարս, զոր լուսաւորեալ կոչելու կը համարձակինք առանց նկատելու, որ մէկ կողմէն արդի եկեղեցականաց անտարբերութիւնը, միւս կողմէն ժողովրդեան մահամբձ վիճակն ու մեռելութիւնը, վատութիւնն ու լքումը՝ եկեղեցւոյ և կրօնի քայքայում կը պատճառեն:

Փ.

Սուրբ Էմմանուէլ Աբաբայ պատուական ամենագիրն Հայաստանեայց Մայր Ս. Աթոռոյն խորին շնորհակալութիւնն հրապարակաւ կը մատուցանէ Արքայոց բարեխնամ Առաջնորդ. Չարաւեանց դերաւ Ս. Արքեպիսկոպոսին, որ իւր սովորական բարեպաշտ աղղասիրութեամբ բարեհաճեալ է երեքտասան մեծ և փոքր գեղեցիկ դուղեր (հալը) յաղարկել ի Ս. Էմմանուէլին ի պէտս մասանց նորաշէն խորանաց մայր Աթոռոյն մերոց:

(6) Տակաւին ջոտեանք այս Հրահանգը, որոյ համար Արքեպիսկոպոսի վարդապետն լրագրաց միջոցաւ այսպէս կըսէ. «Կարգացի գոյն ուշի ուշով եւ ցաւեցայ օր... մեր ազգային վարչութիւնը տակաւին տիրող օրինաց անմուտ է եղեր:

— Չմիւռնից Է. Բեքի լրագրոյն 26 թիւէն հետեւեալ յօդուածը թարգմանելով կը հրատարակեմք ի միջնորդութիւն հանրապետութեան պէշին աղղականաց և բարեկամացն:

«Կրտսեան ծովափութիւնն իմա առաջիկայի կը լուսաւոր մի ըլլալ յանձն. Վասիլ Թորոս պիտի որ ծովափութեան առաջին խորհրդոյ քարտուղարն էր և օսմանեան կառավարութեան օգտակար պաշտօնակալներէն մէկն: Թորոս պիտի չնչրակի բեկման արտիւ մեռաւ կատարեալ հասակի ու ժոյն մէջ և ի կէս ճանապարհի իւր կենաց գեղեցիկ ընթացքին: Իւր խորին հմտութիւնն թուրքերէն և անգղիարէն լեզուաց՝ ծովային դուրսեան պաշտօնէն ուշադրութիւնն հրաւիրեց յամի 1833, որ յանձնեց նմա այն ժամանակը բայ ի պաշտօնէն ծովափութեան թարգմանի, զթարգմանութիւնն քանի մը անգղիական գիրքերու, որք ծովային հրապարակ կը վերաբերին: Թորոս պիտի բաղում հրատարակեալ կատարեց այս դժուար դործը՝ ըզլ թարգմանութիւնն, կըսեմք, և Մէհմետ Կարգին Կրտսեանի շքանշանաւ պատուեցաւ ի վարձատրութիւն:

«Վրեմի պատկառելի և արք. Թորոս պիտի յուզարկեցաւ յՕտկա՝ պատերազմի դերեաց փոխադրութեան վրայօր բանակցելու համար: Իւր քաղցրաբարոյ ընթացքը և իւր հաշտակարգ ոգին մեծապէս դիւրացուցին այս բանախօսութեանց յաջողութիւնն. որոյ բարեպաշտեմք առթիւն արեւոյ Սթանբուլի կարգին Յրդ աստի՛ ճանի շքանշանն ընկաւ ի կառավարութեանն Ռուսաց, և օսմանեան կառավարութիւնն տեղակալ գնդապետի աստիճանը չնորհեց նմա:

«Երեսնից կառավարութիւնն ևս պատուեց զԹորոս պիտի՝ շնորհելով նմա Կարմիր Արծուոյն կարգի Յրդ աստիճանի շքանշանն: Թորոս պիտի, որ մեռաւ առանց հարստութեան ձգելու, միայն իւր անխնայ ջանքերն յառաջադիմելով՝ այս ամեն պատիւներն կը պարտաւոր իւր աշխատասիրութեանն և իւր բնական յատկութեանցն՝ զորս չդադարեցաւ կատարելագործելու մինչև ցերեկն օր իւր կենաց ընթացքին. որ՝ առաջ, ցաւալի՛ կերպիւ ընդհատեցաւ յանկարծազս մահաւմբ մի:

Քաղաքին Աղքատասիրաց բնկերութեան վիճակահանութիւնն Յուլիսի 11 օրինաւորապէս ի դորձ դուրսելով, զթիւ առաջին բաժնին՝ որ 10,000 դուրուշ էր, շահեցաւ յարգոյ Նիկողոս աղա Օհանեան. որ նոյն դուրմարէն 2500 դուրուշ յիշեալ Աղքատ. բնկերութեան և 2500 դուրուշ տեղոյս աղղային հիւանդանոցին նուիրելով, մնացեալ 5000 դուրուշն միայն իրեն յատկացոյց: Այս առատասիրտ գրագումանց բարեգործութիւնն անշուշտ դուրսութեան և յատուկ շնորհակալութեան արժանի է: Աղքատասիրաց բնկերութիւնն իւր յատուկ շնորհակալութիւնն հետեւեալ նամակաւ կը յայտնէ հրապարակաւ. իսկ աղղացին հիւանդանոցին հոգաբարձութիւն անշուշտ բանիւ բերանոյ վճարած պիտի լինի իւր շնորհակալութեան պարտքը:

Իգլի, 18 Յուլիս 1873

Յարգոյ խմբագիր Արքայապետ,

Յուլիսի 11 Նպատու Աղքատասիրաց բնկերութեան վիճակահանութիւնը ամենայն օրինաւորութեամբ կատարուելով, առաջին թիւը՝ որ 10,000 դուրուշ էր, մեծա. Օհանեան Նիկողոս աղան շահեցաւ: Պարտ կը համարուի մեզ ծանուցանել յարգոյ հասարակութեան, որ յիշեալ աղքատասիր աղան հաճեցաւ 2500 դուրուշ Բնկերութեան նուիրել. ընդ որ մեր խորին շնորհակալութիւնը կը լուրջաւոր մատուցանել նմա հրապարակաւ:

Հաճեցէք, յարգոյ խմբագիր, ձեր պատուական լրագրոյն մէջ հրատարակել սոյն գրութիւնը և ընդունել մեր յարգանաց հաւատարմը:

Ի դիմաց Աղքատ. բնկերութեան

Պ. Թ. Պերկաւապետեան, փոխ- ասեմապետ Ս. Գ. Պապիկի, փոխ- ասեմապետ:

Երբեք ոչ նախնիքայ թուով ծանուցինք թէ քաղաքին Հայոց երեւելիներէն բաւական ստորագրութեամբք աղեքսադիր մի մատուցաւ մեր վեմա. կուսակալին, յաւաջ բերելով տեղի ունեցած երկպառակութիւններն և խնդրելով որ աղղային մասնաժողով մի կարգէ և յանձնէ նմա զոնորէնութիւնն աղղ. գործոց քաղաքին վեմա. Սիւրէյա փաշան՝ մարդասիրական ոգով նկատողութեան առնելով յիշեալ աղերսագիրն, հաճեցաւ զգործադրութիւնն նորին յանձնել Չմիւռնից թիւարեթի ընթիւ մեծաշուք:

Ահա՛ մեզ առաջին քայլերն են, որ խոհական և բանիբուն պաշտօնակալ մին է և ինչ խաղաղասեր ոգին զգացմամբ: Ուստի յիշեալ բարձրագոյն տիպոս պաշտօնակալին նախագահութեամբն ամենայն քննութեամբ օրն մեծ ժողով մի եղաւ յԱռաջնորդարանն. ուր հարկւրէն աւելի ազգայինը հրաւիրեալ ներկայ գտնուեցան. բայց օտար տէրութեանց հայադղի հպատակը և նոյն տէրութեան հիւպատոսարանաց ազգային թարգմանը հրաւիրուեցան:

Ազգային այս մեծ ժողովոյն մէջ տաք վիճաբանութիւնք, սաստիկ բանախօսութիւնք և ոսկաւ ինչ բանակուութիւնք լինելէ ետեւ, խիստ մեծագոյն մասին հաճութեամբն՝ երեսփոխանական և քաղաքական ժողովքն լուծուեցան, և յերեքտասան անձանց բաղկացեալ առ ժամանակեայ մասնաժողով մի կազմուելով՝ նմա յանձնեցաւ նորոգութիւնն երեսփոխանական ժողովոյն ըստ տրամադրութեանց Սահմանադրութեան: Եւ նորոգեալ երեսփոխանական ժողովոյն միջոցաւ՝ դարձեալ ըստ Սահմանադրութեան, Բաղաքական նոր ժողով մի պիտի հաստատուի: Բայց մինչև այս նորոգութեանց ի գործ դրուին, հարկաւ յիշեալ առ ժամանակեայ մասնաժողովն պիտի հսկէ ազգային տնտեսութեան վերայ և ստիպողական գործքերը պիտի կատարէ:

Ահա՛ առաջին նորահաստատ ազգային առ ժամանակեայ մասնաժողովն անդամոց անուանքն. յորոց առաջին երեքն՝ լուծեալ Բաղաքական ժողովն ընտրուեցան.

Մեծապատիւ տեարք

- Ռսկանեան Յոհաննէս,
- Պերկամալեան Պողոս,
- Տայիեան մահտեսի Եղաղբ,
- Գարագաշեան Յակոբ,
- Կիւլպէնքեան հաճի փաշա,
- Ճէլէպեան Յոհաննէս,
- Միրզայեան Յոհաննէս,
- Շահինեան Կարապետ,
- Պարտաւնճեան Ստեփան,
- Պոյաճեան Աւետիս,
- Միմենաքիւն Յակոբ,
- Սուրբանեան Գեորգ,
- Տէտեան Ստեփան:

—Եթէ Կ. Պօլսոյ ազգային վարչութիւնն՝ որ գաւառական Հայոց վերայ տեսուչ կամ խնամակալ համարեալ է և նոյն պահանջումն ունի, եթէ, կրնա՞ր, Կ. Պօլսոյ վարչութիւնն փութար ըստ ժամանակին յազարկել մեզ զհայտարար առ ժամանակեայ հոգեւոր հովիւն զոր անխէ մը աւելի է խնդրած եմք, անշուշտ Զմիւռնաբնակ Հայք պիտի չպարտաւորէին տեղական իշխանութեան բարեխնամ միջնորդութեանն գիւնել ի կարգադրութիւն ազգային գործոց խրոյ: Բայց գ. ժաղգարար կրտսնեմք թէ նոյն ինքն Կեդրոնական վարչութիւնն ևս աղատ չէ յերկրպագութիւն և հազիւ թէ ժամանակ ունի Կ. Պօլսոյ ազգային տնտեսութեանց վերայ հոգ տանել և միաբանութիւն հաստատել, եթէ կարելի է: Փանդի ցաւօր Կոստի կը խոսեմք, որ Հայոց ազգային յատկութեանց գլխաւորն անմիաբանութիւնն է, որ ամեն տեղ կը տիրէ:

ՔԱՆԱՔԱՆ ԼՈՒՐԻՔ

Զմիւռնիա, 28 Յուլիս:

Մեր վսեմաւ. կուսակալին մարդասէր խնամքը քաղաքի արհեստից գործոց վերահաստատեցաւ. հին քառանկանային մէջ որ ի Դարաթաշ. ուր ամեն ազգի որդի և կարօտ տղայք պիտի ընդունուին ձրիաբար:

—Սաստիկ տաքը կը շարունակէ, ազգերը և ջրհորք ըստ մեծի մասին ցամաքելու վերայ են: Բարեբաղդարար հասարակաց առողջութիւնն գոհացուցիչ վիճակի մէջ կը գտնուի: Մովսէս Բաղանիքեան միշտ լեցուն են. ուր հասարակութիւնն ոչ սակաւ աղքատան կը գտնուէ ընդգէմ ջրանութեան օդոյն:

—Փարսիական (քէ) ըմբոստ մեղուանքն ևս, զոր Կ. Պօլսոյ Պէօյիւրտէքէ գիւղին ծովեզերեայ հրապարակին կը տար. նմանեցնել, ամեն երեկոյ

լի են բազմութեամբ արանց և տիկնայց, որք ցերեկուան տաքէն ձանձրացեալ, երեկոյեան զով օդը ծծելու կը լինեն և ոչ սակաւ կը զուարճանան եւրոպական նուագարանաց քաղցր ներդաշնակութեամբն:

—Յանցելով շարաթու փիտէն ի նաւահանգիստ մեր հասնող փոքրիկ նաւու մը մէջ սոսկալի կրկին մարդասպանութիւն եղեւ: Նաւապետն և իւր միակ նաւաստին միմեզ մի (քէսէրով) չարաչար սպանուեցան Յոյն ճանապարհորդէ մի, զոր նաւապետը փիտ կը գրէն աւեր էր իղմիր բերելու: Այս եղեւնագործը նաւահանգստին մէջ ֆօրտէլիոյի առջև այս կրկին մարդասպանութիւնն ընելէ ետեւ, նաւապետին քով եղած 30 լիւսայի չափ դրամը կառնու և գաղտուկ իյաւմաք կը լի: Բարեբաղդարար մարդասպանին որ Սթէֆանոս Լէմա կը կոչուի, մեր ոստիկանութեան աշակերտը հետազոտութեամբն ըրուեցաւ և հարկաւ ի մահ պիտի դատապարտուի ըստ օրինաց:

—Բարեւսէր հատարակութեան ուշադրութիւն կը հրաւիրեմք Ուսումնասէր ընկերութեան վերայ, որ յերկուց ամիսը հետէ հաստատուալէ ի քաղաքս, և որոյ նպատակն է երեկոյեան դաստառութիւն հայերէն, տաճկերէն և գաղղիալէն լեզուաց: Այս դաստառութիւնն որ ձրի է, ամեն հասակի կարօտ ազգայնոց յատկացեալ է, և նորա ծախքը ազգասէր և ուսումնասէր Հայոց նուիրատուութեամբ կը հոգացուի: Աւելորդ կը համարեմք նոցա բարեխնամ գործակցութիւնն հայցել այս ընկերութեան վերայ. որոյ ջանքն արդէն 405ն աւելի աշակերտաց դաստառութիւն կը լինի ամեն երեկոյ: Մեր յաջորդ թուով քիչ մը երկարօրէն պիտի խօսեմք այս ազգօգուտ հաստատութեան վերայ:

—Մանկայի սրբոց Գայիանեանց վարժարանին բարեկարգութեան և յառաջագիւլութեանն վրայօք երկար նամակ մի ընկալաք, զոր թերթիս անձկութեանը պատճառաւ գալ շարժու պիտի հրատարակեմք:

—Ահա՛ ինչ հրդեհ մի տեղի ունեցաւ ի Գուլաքաղաքն յանցելուն շարաթու, և բարձր շուկայն հրոյ ճարակ ըլաւ: Կը հաւատեն թէ եղած քնան 150,000 լիւսայի կը հասնի:

—Այս ընկերութիւնն նախորդ մեղաքին վսեմ Ղրիգորեք Արթուրեք Պէյը՝ որ ի մօտ աւուրս կայսերական հրովարտակաւ օսմանեան դեպքան կարգուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգաց հասարակապետութեան քով, Մէքսիկէ կարգին երկրորդ աստիճանի շքանշանաւ պատուեցաւ: Կը հաւատեն թէ յիշեալ դեպքին 300 լիւս ամանեան թողալ որոշուեւ է:

—Յայտնի է թէ ի մօտ աւուրս արքունի ճարտարապետ վսեմա. Պալեան Սարգիս պէյին նախագահութեամբ բաժանորդական ընկերութիւն մի հաստատուեցաւ ի Կ. Պօլսոյ ընդ անուամբ «Օսմանեան ընկերութիւն հասարակաց յինուածոց»: Երբ ընդհանուր անօրէն կարգուած էր մեծա. Կոստանդեան Յակոբ էֆէնային, Բոյց չեմք գիտեր ինչ պատճառաւ՝ Կոստանդեան էֆէնային իւր հրաժարականը տալով, յիշեալ ընկերութեան ընդհանուր անօրէն անուանեցաւ մեծաշուք Մկրտիչ Աղաթօն էֆէնային, որ քաղաքիս առեւտրական աստեմին նախորդ նախագահն էր:

—Եղիպատի փոխարքայն փառաքելով իւր մարդասիրական վեհ զգացմանց նոր ապացոյց մի տալ, հաճեցաւ 4000 լիւսայի ընդարձակ գետին մի գնոյ առնուլ ի բարձունս Էմիրկենի, ուր աղջկանց վարժարան մի, կանանց յատկացեալ հիւանդանոց մի և հասարակաց գեղեցիկ պարտէզ մի շինել պիտի տայ իւր ծախքով:

Յայտնի է թէ Խըրիկին պարտք ի յիշեալ գիւղն կը գտնուի, որ վոսփորի եւրոպական եղերաց վերայ է:

—Վէնայի, Թրեստի և Վենետիկ մէջ քուլերայի գէտերն անպակաս լինելով, քաղաքիս քարանձինայի տեսչութիւնն հրաման ընկալաւ ի Կ. Պօլսոյ՝ առողջապահի միջոցներն իւր գործընել Թրեստէն եկող ճանապարհորդաց և վսեմաւոյ համար:

—Օգոստոս. Սուրբանէ հաճեցաւ Մէքսիկէ

կարգին առաջին աստիճանի շքանշանն շնորհելու վսեմապալ յիւր Սիմէյին, որ Հէլլենացոյ գետալան է Բարձրա. Դրան քով:

—Սեծաշուք մօսիւ Էրճէր գիտնականը, որ Մասրիօհանգարիոյ ընդհանուր հիւպատոս է ի Օմուռնիա, և առ ժամանակեայ կերպիւ ի Վէնա կը գտնուի, պատուական գիրք մի շարադրած է Օմուռնիոյ վերայ, որոյ գաղղիալէն տպագրութեան նստիւմ (dedicace) մարդասիրաբար ընդունուեցաւ ի վեհա. Սուրբանէն: Մասրիօհանգարիոյ կայսրն որուն մօսիւ Էրճէր սեպուհն անձամբ մատուց ի Վէնա օրինակ մի ի յիշեալ շխատասիրութեան, նորա արժանիքն կատարեալապէս ճանաչելով՝ իւր կայսերական գոհունակութիւնն յայտնեց նմա:

—Հանգուցեալ Վլուս անդղիացի բժիշկն ծանօթ էր քաղաքիս Հայոց մեծագոյն մասին: Սորա 21-22 տարեկան որդին՝ որ Միլիթանգարիայէն իւր գաւ, շոքեմաւն ինքընքը ի ծով նետելով խեղդուեցաւ: Այս դժբաղդ երիտասարդն՝ որ միջամաղձութեան ախտիւ տալաւ ինչ համակեալ էր, ձախորդ սիրահարութեան ախտէ մը ևս բռնուելով Միլիթանգարիոյ մէջ, այս յուսահատական դործոյ ձեռք զարկեր է ի կսկիծ սրտի իւր տարաբաղդ մօրն:

—Օտար լրագիրներէն կիմանամք թէ Բ. Վուռն ըստ խնդրոյ յԱսորիս բնակող Վլուսեայ Պատրիարք Պետրոս եպիսկոպոսին, կայսերական հրովարտակ փշորհեալ է նմա, որով Վլուսեայ եկեղեցին, որ մինչև ցայսօր Հայոց եկեղեցոյն հոգեւոր իշխանութեան ներքե կը գտնուէր, անորմէ բաժնուելով՝ ան կախ եկեղեցի մի ճանաչուած է ի Բարձրա. Վարանէ:

—Կայսերական հրովարտակաւ, Կ. Պօլսոյ քաղաքապետ Ալի փաշան օսմանեան դեպքան անուանեցաւ ի փարիզ՝ փոխանակ Սէրվէր փաշային. և այս առթիւ Սէրվէր կարգին առաջին աստիճանի շքանշանը շնորհեցաւ նմա:

Փարիզի նախորդ դեպքան վսեմա, Սէրվէր փաշան արդէն վերադարձաւ ի Կ. Պօլսոյ:

—Ի Վէնայի Զիլլեր անդղիական օրագրոյն գրածին նայելով՝ Պաղտասար աղա Միլիթանգարի Վուսիացի Հայ երեւելի վաճառականին՝ Բարձրագոյն Վարան եկամտից տեսչութեան հետ ունեցած գործը՝ որ ի քանի մի ամաց հետէ ի կախ մնացեալ էր, այս օրերս կարգադրուեւ է. այսինքն 80,000 լիւս միայն պիտի տրուի աղա Միլիթանգարիին, անդորրաւ զիւր անունով ի նմանէ վսեմ իւր բոլոր պահանջն:

—Ի իւրբուլէն կը ծանուցանեն թէ նոյն քաղաքին Վարանեպէք և ընկերաց վաճառատունն զգործուցեր է իւր վաճառուներն: Յիշեալ վաճառատունն մասնաւորապէս Հարաւային Ամերիկայի հետ առեւտուր կընէր և որուն պարտքն կը կարծուի թէ 12 միլիոն ֆրանքի կը հասնի:

—Այս առաւօտ Եղիսեան գերա. տէր Յոհաննէս արքեպիսկոպոսն՝ իրեւ Պատրիարքական առ ժամանակեայ տեղապահ կըսպասուէր ի Կ. Պօլսոյ, բայց չհասաւ, չեմք գիտէր ինչ պատճառաւ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիօնի գիւնեան քիչ մը իջան՝ ծախու առնողաց նուագութեան պատճառաւ: Այս շարժում 40 կողմի չափ վաճառեցաւ. հասարակ աֆիօնը 210-207 զուրուչի, Գառահիւսարինը՝ 215 և Պօլսոյնը՝ 220 առ չէքին:

Բաւաղալը հանդարտութեան մէջ է, և այս շարժում միայն 600 հակ վաճառեցաւ 430-435 միլիոնայով մաքրուածը, 367-365 միլիոնայով: Փալամուտին գիւնեան հաստատուն են. մեղանա կոչուած տնակը 135 միլիոնայով կը շարունակէ: Անդղիոյ տնակը՝ 102-107 զուրուչի: Քէօքպոյային այսօրուան արժէքն 215էն 210 զուրուչի է առ. կենդինարն ըստ տեսակին:

Ճէհրին գիւրաւաճաւ է 19-19 1/2 օխան: Սուրբանիւնա կոչուած անկուտ կարմիր չամիչն 3էն մինչև 4 1/2 զուրուչի վաճառեցաւ: Չոր թուրն 165-170 զուրուչի ծախուեցաւ կենդինարն: Մինչև ցայսօր 50-60 ուղտի բեռ հասաւ ի չուկայն մեր:

Խմրագիր—տէր լրագրոյս,

Գ. Լա. Վ. Պալտալեան:

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԱԼՈՒՍՈՅ ՍՐԱՐԱՆՍՆ